Ո Ր Ո Շ Ու Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

26.10.2026թ. **ք. Երևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության /այսուհետ՝ Ծառայություն/ Երևան քաղաքի Ավան, Նոր-Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Տիգրան Ազատյանս, ուսումնասիրելով թիվ 01372042 և 01372071 կատարողական վարույթների նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչ. շրջ. ընդ. իրավ. դատարանի կողմից 17 դեկտեմբերի 2014 թ. տրված թիվ ԵԿԴ/0672/17/13 կատարողական թերթի համաձայն պետք է՝ Խաչիկ Սարգսի Խաչատրյան-ից հօգուտ Արցախբանկ ՓԲԸ-ի բռնագանձել 41.703.328 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

Բռնագանձումը տարածել գրավի առարկա , ք.Երևան, Տ.Մեծի 28շ. թիվ 33 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

Պարտապանողից բռնագանձել նաև հօգուտ հայցվորի բռնագանձվելիք ընդհանուր գումարի 5 /հինգ/ տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:

Ձեռնարկված կատարողական գործողությունների կատարման արդյունքում արգելանք էր կիրառվել պարտապան Խաչիկ Սարգսի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող և «Արցախբանկ» ՓԲ ընկերությունում գրավադրված ք. Երևան, ԿԵՆՏՐՈՆ, Տիգրան Մեծի պողոտա 28 շենք, 33 բնակարան, հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ, որի վերաբերյալ կայացվել «Փորձագետ նշանակելու մասին» որոշում:

Ըստ փորձագետի 12.06.2026թ. տրված թիվ No 13/425/26 եզրակացության, ք. Երևան, ԿԵՆՏՐՈՆ, Տիգրան Մեծի պողոտա 28 շենք, 33 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի շուկայական արժեքը փեղազննության կատարման ժամանակահատվածում ունեցած ապրանքային վիճակում, գնահատվում է 41.550.000 (Քառասունմեկ միլիոն հինգ հարյուր հիթսուն հազար) ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43, 67 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 29, 30, 31, 32, 33, 34, 35, 35.1, 35.2, 35.3, 35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Խաչիկ Սարգսի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող և Արցախբանկ» ՓԲ ընկերությունում գրավադրված ներքոհիշյալ գույքը՝

Հ/Հ	Գույքի անվանումը և նկարագիրը	Գնահատման գինը	Մեկնարկային գինը	Գույքի քանակը

1.	ք. Երևան, ԿԵՆՏՐՈՆ, Տիգրան Մեծի պողոտա 28 շենք, 33 բնակարան	41.550.000 ՀՀ դրամ	31.162.500 ՀՀ դրամ	1 հատ

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ ***www.ajurd.am*** *միջոցով:*

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը սահմանել՝ 30.11.2026թ.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասին համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ՝ ***ՏԻԳՐԱՆ ԱԶԱՏՅԱՆ***

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: *Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը:*

Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: